ՆԱԽԱԳԻԾ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__» _____ 2021թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով, և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ.315-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ «Ռենշին» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Կենտրոն վարչական շրջանի, Տերյան փողոցի հ.107 հասցեում, տարածագնահատման 3-րդ գոտում գտնվող 10214.08քմ մակերեսով հողամասից (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 11.12.2020թ. հ.11122020-01-0176 վկայական) 103.3քմ և 12.6քմ մակերեսներով հողամասերը, Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող տարածագնահատման 3-րդ գոտում գտնվող 106.2քմ և 9.7քմ մակերեսներով հողամասերի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկվող նախագծով նախատեսվում է «Ռենշին» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Կենտրոն վարչական շրջանի Տերյան փողոցի հ.107 հասցեում, տարածագնահատման 3-րդ գոտում գտնվող 10214.08քմ մակերեսով հողամասից 103.3քմ և 12.6քմ մակերեսներով հողամասերը փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող տարածագնահատման 3-րդ գոտում գտնվող 106.2քմ և 9.7քմ մակերեսներով հողամասերի հետ։

Տերյան փողոցի հ.107 հասցեում գտնվող 10214.08քմ մակերեսով հողամասը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 11.12.2020թ. հ.11122020-01-0176 վկայականի համաձայն՝ պատկանում է «Ռենշին» ՍՊԸ-ին:

ՀՀ կառավարության 01.03.2007թ. հ.347-Ն և 04.10.2007թ. հ.1150-Ն որոշումներով բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված Երևանի ճարտարագիտական համալսարանին հարող տարածքի ձեռքբերող է ճանաչվել «Ռեգիոն Ինվեստ» ՍՊԸ-ն, որի իրավահաջորդն է «Ռենշին» ՍՊԸ-ն:

Փոխանակվող հողամասերը ընդգրկված չեն հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, գտնվում են Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 3-րդ գոտում և ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի հ.2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծով բնակավայրերի նպատակային նշանակության /կատեգորիայի/ խառը կառուցապատման գոտում են։

Համաձայն հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա։

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում և եկամուտներում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ